ների համար երբեմն հանւում են Ս. Աջն և այլ սրբութիւններն և դրւում են Ս. Լուսաւորչի անուանը նուիրուած բեմի վերայ, ուր և կատարում են ջերմեռանդ հաւատացեալներն իրենց ուխտը։

Ի.

Ս. Լուսաւորչի և Ս. Աջի մասին այսքանն համառօտելուց յետոյ՝ չենք կարող չտեսնել, որ դեռ Ե. դարից սկսած մինչև մեր ժամանակները մեծարանքի և երախտագիտութեան ջերմ արտայայտութիւններն Հայոց մէջ անպակաս են եղել՝ երևցնելու համար իրենց սէրն և հաւատարմութիւնն առ մեր Լուսաւորիչն։ Մօտ 1600 տարի շարունակ այդ զգացմունքը վառ է եղել Հայոց սրտերում, և այս իսկապէս այն պատճառով, որ Հայոց հոգևոր պատմական կեանքի մէջ չկայ այնքան նշանաւոր և այնքան հանրամատչելի սրբութիւն՝ շօշափելի կերպով բոլորի սրտերն իրար հետ միացնող՝ ինչպէս Ս. Լուսաւորչի անունը։ Նորա մէջ մարմնացած է անցեալի քաղցր յիշատակներից ամէն բան։ Այդ անունը շատ որոշ կերպով զարգացուցել և զարգացընում է մեր մէջ ազգային կրօնական գիտակցութիւն։ Այդ անունը միացուցիչ ազդեցութիւն է ունեցել միշտ Հայոց մէջ։ Նոյն իսկ Հայոց Եկեղեցուց բաժանուածներն էլ այդ անունով են ձրգտում միշտ հոգևոր կապ պահել իրենց համարիւն